

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

# ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (63)  
2014 թ.

Գլխավոր խմբագիր՝  
ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀՀ իրավաբանների միություն,  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ո ղ ր հ ու ը ղ

Խմբագրության հասցեն՝  
ՀՀ, 0025 Երևան,  
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ  
իրավագիտության ֆակուլտետ:  
Հեռ. 060-71-02-47  
Էլ. կայք՝ [www.orenq.am](http://www.orenq.am)

Սամվել Դիլբանդյան -

ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ

Դավիթ Մելքոնյան -

ի.գ.թ., պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Գագիկ Համբարձումյան

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.թ.

Վիգեն Քոչարյան - ի.գ.թ.

Խմբագրությունը կարող է  
հրապարակել նյութեր՝ համամիտ  
չլինելով հեղինակների  
տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի  
չպատվիրված նյութերը չեն  
ընդունվում:

e-mail: [ysu@ysu.am](mailto:ysu@ysu.am)

Դասիչ՝ 77771

Տպագրական 7 մանուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

18.04.2014

Հանձնված է տպագրության

13.05.2014

СОЮЗ ЮРИСТОВ  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

# ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (63)  
2014 г.

Главный редактор:  
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:  
Союз Юристов РА,  
Юридический факультет ЕГУ

## Редакционный совет

Самвел Дилбандян -

д.ю.н., зам. главного редактора

Давид Мелконян -

к.ю.н., ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Гагик Амбарцумян

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - к.ю.н.

Виген Кочарян - к.ю.н.

Адрес редакции:  
РА, 0025 Ереван,  
ул. Алека Манукяна 1, юридический  
факультет ЕГУ.  
Тел.: 060-71-02-47  
e-mail: a\_petrosyan@ysu.am  
web: www.orenq.am

8 усл. печ. л.  
Тираж: 500  
Сдано в набор 18.04.2014  
Подписано к печати 13.05.2014

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐԸ ..... 5

#### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

##### Ռաֆայել Եղյան

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ .....6

##### Սայադ Բադալյան

ՕՐԵՆՍԱԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ .....16

##### Մերի Սարգսյան

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՀԱՄԱԳԱՐԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՎԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....23

##### Արև Ղազարյան

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՔՎՈՏԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ .....34

#### ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

##### Գոհար Գևորգյան, Տարոն Սիմոնյան

ՂԱՏԱՐԱՆՈՒՄ ԵՐԵՄԱՅԻ ԼՍՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕՐԵՆՍԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ .....44

##### Լևոն Շախպարյան

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱՎԱՐԳՈՒՄ .....53

##### Լիլիթ Ղազանջյան

ԱՆՁԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱՍԱԿԱՐԳԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ .....63

#### ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

##### Елена Антонян

ПРИВЛЕЧЕНИЕ ОСУЖДЕННЫХ К ТРУДУ И ЕГО ЭФФЕКТИВНОСТЬ .....72

##### Արմինե Մելիքսեթյան

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ 235 ՀՈԴԿԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽՐԱԽՈՒՄԱԿԱՆ ՆՈՐՄԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ .....80

##### Տիգրան Մուկոյան\_Toc387931029

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՑԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ .....88

**Գուրգեն Քոթանջյան**

ՄԱՐՄՆԱՎԱՃԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ..... 98

**Արմեն Գրիգորյան**

ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ ԽԱՔԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ  
ԿՆՔՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔԻՑ ..... 106

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ****Վահագն Դալլաքյան**

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԱՐԳԵԼԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ  
..... 114

**Արսեն Թավադյան**

ՀԱԿԱՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՄ  
ԵՎ ԱՄՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ԶԵՎԱՎՈՐՎԱԾ ՈՐՈՇ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԻ  
ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ ..... 124

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ****Քնարիկ Վարդանյան**

ՓԱԽՏԱԿԱՆԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ..... 133

**Միեր Մկրտչյան**

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ..... 146

## ՕՐԵՆՍՊՐԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

### Սայադ Բադայան

*ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

Օրենսդրական գործընթացը՝ որպես օրենքների ընդունման առնչությամբ իրականացվող գործունեություն, սկիզբ է առնում օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրագործմամբ: Այս առումով առանձնակի կարևորություն է ստանում նշված իրավունքի իրագործման այնպիսի ձևերի սահմանման անհրաժեշտությունը, որոնք օրենսդրական նախաձեռնության իրավունքի սուբյեկտների կողմից այդ իրավունքն անարգել իրագործելու իրական հնարավորություն կապահովեն:

Օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրագործման ձևերի վերաբերյալ իրավագիտության մեջ ձևավորվել են մի քանի դիրքորոշումներ, որոնց վերլուծությունը թույլ է տալիս դրանք խմբավորել հիմնական հատկանիշների ընդհանրության հիման վրա:

Առանձին գիտնականներ գտնում են, որ օրենսդրական նախաձեռնության իրավունքը հնարավորություն է տալիս պառլամենտում առաջադրելու միայն պատրաստի օրինագծեր<sup>1</sup>: Մյուսների կարծիքով, այն ոչ միայն նախատեսում է օրինագծեր, այլ նաև օրենսդրական առաջարկություններ ներկայացնելու լիազորություն<sup>2</sup>: Որոշ գիտնականների կարծիքով էլ, օրենսդրական նախաձեռնությունն օրենսդրի առջև իրավական նորարարությունների անհրաժեշտության մասին հարցի բարձրացումն է կա'մ հատուկ դրա համար լիազորված մարմինների և իրավասու անձաց կողմից, կա'մ այնպիսի մարմինների և իրավասու անձանց կողմից, որոնք օժտված չեն այդ իրավունքով, և որոնց կողմից նոր օրենքի ընդունման նախաձեռնման հարցի քննարկումը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վերապահված է օրենսդիր մարմնի հայեցողությանը<sup>3</sup>:

Այսպիսով, ի մի բերելով և ընդհանրացնելով քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ իրավաբան գիտնականների կարծիքները, կարելի է առանձնացնել օրենսդրական նա-

<sup>1</sup> St' u, օրինակ, Редькин О. Б. Консолидированная законодательная инициатива: правовое обоснование, оценка // Конституционное и муниципальное право. - М.: Юрист, 2011, № 4, էջ 54; Безруков А. В. Законодательная инициатива: проблемы реализации и взаимодействия законодателей // Конституционное и муниципальное право. - М.: Юрист, 2008, № 10, էջ 15:

<sup>2</sup> St' u, օրինակ, Волкодаева Н. А. Принципы и сущность законодательной инициативы // Юридические науки. - М.: Компания Спутник+, 2010, № 5 (45), էջ 11; Теория государства и права: Курс лекций / Под ред. Н. И. Матузова, А. В. Малько, 2-е изд., перераб. и доп. М., 2005, էջեր 415-416: Հղումն ըստ՝ Першин Е. А. Проблемы реализации права законодательной инициативы и ее субъектами в законодательном процессе // Научные труды РАЮН. В 3-х томах. - М.: Юрист, 2008, Вып. 8, т. 1, էջ 915:

<sup>3</sup> St' u, օրինակ, Васильев Д. В. Право законодательной инициативы в парламентском законодательстве Российской Федерации // Юридические записки молодых ученых и аспирантов ЯрГУ. Сборник статей. - Ярославль: Изд-во Яросл. ун-та, 2003, Вып. 2, էջ 16; Антонова Л. И. О стадиях правотворческого процесса в СССР // Правоведение. - Л.: Изд-во Ленингр. ун-та, 1966, № 1, էջեր 6-7:

խածեռնության իրավունքի բովանդակության վերաբերյալ երեք մոտեցում՝

ա) միայն օրինագծեր ներկայացնելն ու դրանք պարտադիր քննարկման առարկա դարձնելն է,

բ) ինչպես օրինագծեր, այնպես էլ օրենսդրական առաջարկություններ ներկայացնելը և դրանք պարտադիր քննարկման առարկա դարձնելն է,

գ) օրինագծեր և օրենսդրական առաջարկություններ ներկայացնելն է, պայմանով, որ օրինագծերը պետք է պարտադիր քննարկվեն, իսկ առաջարկությունները՝ օրենսդիր մարմնի հայեցողությամբ:

Մեր կարծիքով, վերոհիշյալ երրորդ մոտեցումը բավարար չափով հիմնավորված չէ: Օրենսդրական նախաձեռնության իրավունքը սուբյեկտիվ իրավունք է՝ վերապահված Սահմանադրությամբ որոշված մարմիններին և անձանց: Օրենսդրական նախաձեռնության սուբյեկտի կողմից այդ իրավունքի իրագործումն իրավաբանական փաստ է, որի ուժով ծագում է իրավահարաբերություն տվյալ իրավունքի սուբյեկտի և օրենսդիր մարմնի միջև: Այդ իրավահարաբերությունում օրենսդրական նախաձեռնության սուբյեկտի իրավունքին համապատասխանում է օրենսդիր մարմնի պարտականությունը՝ պարտադիր քննարկման առարկա դարձնել օրենսդրական նախաձեռնությունը: Նման պայմաններում չի կարող խոսք լինել օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրագործմանը ծագած իրավահարաբերությունում օրենսդիր մարմնի հայեցողության մասին: Այդ մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքում, երբ օրենսդիր մարմնին օրինագիծ է ներկայացվում օրենսդրական նախաձեռնության իրավունքի սուբյեկտ չհանդիսացող անձի կողմից:

Այսպես, ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ կարող է օրենսդիր մարմնին ներկայացնել առաջարկություններ կամ օրինագծեր: Այդ հնարավորությունը բխում է ՀՀ Սահմանադրության 27.1. հոդվածում ամրագրված՝ անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքից: Բացի դրանից՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը (5-րդ մաս) սահմանում է, որ իրավաբանական և ֆիզիկական անձինք իրենց նախաձեռնությամբ իրավունք ունեն մշակելու և համապատասխան իրավաստեղծ մարմիններ ներկայացնելու նորմատիվ-իրավական ակտերի նախագծեր: Սակայն, ի տարբերություն օրենսդրական նախաձեռնության իրավունքի սուբյեկտների կողմից ներկայացված օրինագծերի, այս օրինագծերի քննարկումը խորհրդարանի համար պարտադիր չէ: Ընդ որում, խորհրդարանը բոլոր դեպքերում չի էլ կարող քննարկել նման օրինագծերը, քանի դեռ դրանք առաջադրված չեն օրենսդրական նախաձեռնության իրավունքով օժտված սուբյեկտի կողմից: Հետևաբար, օրենսդրական նախաձեռնության իրավունքը միայն Սահմանադրությամբ որոշված սուբյեկտներին ընձեռված հնարավորությունն է՝ օրենսդիր մարմնում առաջադրելու պարտադիր քննարկման ենթակա օրինագծեր:

Ինչ վերաբերում է օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրականացման ձևերի խնդրին (պատրաստի օրինագծի թե նաև օրենսդրական առաջարկությունների տեսքով), ապա կարծում ենք, որ այս հիմնախնդիրն ունի ոչ այնքան տեսական, որքան գործնական նշանակություն: Թե՛ պատրաստի օրինագծի առաջադրման և թե՛ օրենսդրական առաջարկության ձևով այս իրավունքի իրագործման դեպքում նույնն է օրենսդ-

րական նախաձեռնության իրավունքի բովանդակությունը՝ որպես օրենսդիր մարմնի առջև օրենսդրական նոր կարգավորման հարց բարձրացնելու Սահմանադրությամբ ապահովված հնարավորություն: Նման պայմաններում օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրագործման ձևերի սահմանման հարցում պետք է առաջնորդվել՝ հաշվի առնելով նշված խնդրի գործնական կարևորությունը՝ այն դիտարկելով օրենսդրական նախաձեռնության իրավունքի այն սուբյեկտների համար նշված իրավունքի իրագործման լրացուցիչ երաշխիքներ սահմանելու անհրաժեշտության համատեքստում, որոնք կարող են որակյալ օրինագծեր պատրաստելու հետ կապված հանդիպել օբյեկտիվ բարդությունների: Այդպիսի սուբյեկտների թվին կարելի է դասել հիմնականում անհատ պատգամավորներին, ինչպես նաև ժողովրդական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտի ներդրված լինելու դեպքում՝ քաղաքացիներին: Օրենսդրական նախաձեռնության իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից այդ իրավունքից օգտվելու լայն երաշխիքներ ստեղծելու նպատակով նպատակահարմար է նշված սուբյեկտների համար որպես այդ իրավունքի իրագործման ձև նախատեսել նաև օրենսդրական առաջարկությունները:

Դեռևս մեկ դար առաջ իրավաբան-գիտնականները նշում էին. «Փաստորեն, պառլամենտական նախաձեռնության լիակատար ազատության պայմաններում օրենսդրական նախաձեռնությունն ինքնին անխուսափելիորեն կենտրոնանում է կառավարության ձեռքում, քանի որ միայն վերջինս ունի օրենքների նախնական մշակման անհրաժեշտ տեխնիկական ռեսուրսներ»<sup>4</sup>: «Կառավարական նախաձեռնությունն ամենուրեք և միշտ լինում է ավելի գործուն, քանի որ թե՛ քանակությամբ և թե՛ հիմնավորվածությամբ նախարարական նախաձեռնությունները բարձր են մյուսներից: Նախարարությունն ունի գիտականորեն և տեխնիկապես պատրաստված օրինաստեղծագործության համար ներուժի պաշար, հարուստ է օրենսդրական նյութերով, վիճակագրական տվյալներով, գրադարաններով»<sup>5</sup>:

Միևնույն ժամանակ, օրենսդրական առաջարկությունը ևս պետք է ունենա մասնավորեցման որոշակի աստիճան և իրականացվի օրենքով հստակ սահմանված ձևով: Օրինակ՝ չի կարելի օրենսդրական առաջարկություն համարել պատգամավորների ելույթները որևէ օրենքի ընդունման անհրաժեշտության մասին, ինչպես երբեմն նշվում է իրավաբանական գրականության մեջ<sup>6</sup>: Մեր կարծիքով, օրենսդրական առաջարկությունը պետք է իրականացվի օրենքի հիմնական գաղափարն արտացոլող գրավոր օրենսդրական առաջարկության տեսքով, որը պետք է ընդգրկի հետևյալ հարցերը.

- ա) կարգավորման ենթակա հարաբերությունների բնութագիրը,
- բ) օրենքի նպատակները,
- գ) օրենքի հիմնական դրույթները,
- դ) օրենքի կիրառման ենթադրվող հետևանքների ընդհանուր վերլուծությունը,
- ե) ի կատարումն օրենքի ընդունվելիք այլ իրավական ակտերի թվարկումը:

<sup>4</sup> Տե՛ս Котляревский С. А. Юридические предпосылки русских основных законов. Москва, типография Г. Лиснера и Д. Собко, 1912, էջ 11, URL: <http://www.twirpx.com/file/411410/?rand=4216624> (հղումը 15.09.2013 թ. դրությամբ):

<sup>5</sup> Տե՛ս Шершеневич Г. Ф. Общая теория права. Том 1-2, Москва, Издание бр. Башмаковых, 1910, էջ 123, URL: <http://www.twirpx.com/file/173526/> (հղումը՝ 15.09.2013 թ. դրությամբ):

<sup>6</sup> Տե՛ս, օրինակ, Законодательная инициатива - стадия законодательного процесса в Российской Федерации: Монография / Лебедев В. А., Ройзман Н. В. - Челябинск: Изд-во ИИУМЦ «Образование», 2010, էջ 23:

Նման մասնավորեցման աստիճան ունեցող օրենսդրական առաջարկության հիման վրա արդեն կարելի է մշակել որակյալ օրինագիծ: Միաժամանակ, նման առաջարկության մշակումը օրենսդրական նախաձեռնության իրավունքի սուբյեկտից չի պահանջում ունենալ այն կազմակերպական և տեխնիկական ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են օրինագծի պատրաստման համար, և որոնք բացակայությունը կարող է խոչընդոտել այդ սուբյեկտների կողմից իրենց օրենսդրական նախաձեռնության իրավունքն արդյունավետորեն իրագործել:

Ի տարբերություն պատրաստի օրինագծի առաջադրմամբ օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրագործման օրենսդրական առաջարկության ներկայացմամբ և դրան օրենսդիր մարմնի կողմից հավանություն տալով օրենսդրական նախաձեռնության փուլը չի ավարտում: Օրենսդրական առաջարկությանը հավանություն տալու դեպքում դրվում է համապատասխան օրինագծի մշակման հարցը, և առաջարկության հիման վրա սկսվում է օրինագծի մշակման գործընթացը, որն այնուհետև առաջադրվում է օրենսդիր մարմնում օրենսդրական նախաձեռնության սուբյեկտի կողմից՝ ընդհանուր կարգով:

Պետք է նշել, որ օրենսդրական գործընթացի փուլային բաժանումը ևս մի փոքր այլ է, երբ օրենսդրական նախաձեռնության իրավունքն իրագործվում է օրենսդրական առաջարկության ներկայացման տեսքով: Այս դեպքում օրենսդրական գործընթացի հիմնական փուլերը կլինեն հետևյալները՝ օրենսդրական առաջարկության ներկայացում, օրենսդրական առաջարկության քննարկում, օրենսդրական առաջարկության ընդունում, օրինագծի մշակում, օրինագծի առաջադրում, օրինագծի քննարկում, օրենքի ընդունում և օրենքի հրապարակում:

Օրենսդրական առաջարկության ինստիտուտի ներդրման դեպքում լուծում պահանջող հարցերից մեկն այն է, թե որ մարմինը պետք է իրականացնի օրինագծի մշակումն այն բանից հետո, երբ օրենսդրական առաջարկությունն ստանում է պառլամենտի հավանությունը:

Մեր կարծիքով, այս խնդրի ամենաարդյունավետ լուծումն այն է, որ օրենսդրական առաջարկությանը օրենսդիր մարմնի կողմից հավանություն տալուց հետո օրինագծի մշակման պարտականությունը դրվի Ազգային ժողովի համապատասխան ոլորտային մշտական հանձնաժողովի վրա: Սակայն Հայաստանի Հանրապետությունում մշտական հանձնաժողովների կողմից օրինագծերի մշակումը չունի բավարար իրավական հիմքեր: Մասնավորապես, Սահմանադրության 73 հոդվածի համաձայն՝ մշտական հանձնաժողովներն ստեղծվում են օրենսդրական ակտերի նախագծերի և այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողովին եզրակացություններ ներկայացնելու համար: Այսինքն՝ մշտական հանձնաժողովներն օրինագծեր պատրաստելու սահմանադրական իրավասություն չունեն:

Նման պայմաններում օրենսդրական առաջարկությունների ինստիտուտի ներդրման դեպքում առաջարկում ենք, որ Ազգային ժողովի հավանությանն արժանացած օրենսդրական առաջարկությունների հիման վրա օրինագծերի մշակման պարտականությունը դրվի Ազգային ժողովի աշխատակազմի վրա: Օրինագծի մշակումից հետո այն պետք է առաջադրվի օրենսդրական նախաձեռնության իրավունքի այն սուբյեկտի կողմից, որը ներկայացրել է օրենսդրական առաջարկությունը:

Վերադառնալով օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրագործման ձևերի հիմնախնդրին՝ պետք է նշել, որ որպես այդպիսի ձև երբեմն նշվում է նաև արդեն իսկ



շրջանառության մեջ գտնվող օրինագծերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը: Այսպես, Վենետիկի հանձնաժողովի՝ օրենսդրական նախաձեռնության վերաբերյալ զեկույցում<sup>7</sup> օրինագծերում ուղղումներ կատարելու առաջարկ ներկայացնելու իրավունքն առանձնացվում է որպես օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրագործման ինքնուրույն ձև: Ընդ որում, ըստ նշված զեկույցի՝ ուղղումների իրավունքը դիտվում է որպես առավելապես պառլամենտական արտոնություն: Քանի որ օրինագծեր ներկայացնելու իրավունքը գործնականում կենտրոնացված է գործադիր իշխանության ձեռքում, ուղղումների իրավունքը նշվում է որպես օրենսդիր իշխանության կողմից օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրագործման հիմնական ձև:

Մի շարք պետություններում ուղղումների իրավունքն օրենսդրորեն ամրագրված է որպես օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրագործման ձև: Օրինակ՝ համաձայն ՌԴ Պետական դումայի կանոնակարգի 104 հոդվածի՝ օրենսդրական նախաձեռնության իրավունքն իրականացվում է նաև օրինագծերում ուղղումներ կատարելու առաջարկություններ ներկայացնելու միջոցով<sup>8</sup>:

Համաշխարհային պրակտիկայում հանդիպում են նաև դեպքեր, երբ ուղղումների իրավունքը վերապահվում է ոչ միայն պառլամենտի յուրաքանչյուր անդամի, այլ նաև մշտական հանձնաժողովներին, պառլամենտական խմբերին, կառավարությանը, նախարարներին և վերջիններիս կողմից լիազորված պաշտոնատար անձանց, ինչպես օրինակ, սահմանված է Լատվիայի սահմանադրության 63 հոդվածում<sup>9</sup> և Լեհաստանի սահմանադրության<sup>10</sup> 119 հոդվածում:

Գտնում ենք, սակայն, որ արդեն իսկ շրջանառության մեջ գտնվող օրինագծերում ուղղումներ կատարելու առաջարկները չի կարելի դիտարկել որպես օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրագործման ձև: Ճիշտ է, և՛ օրենսդրական նախաձեռնության իրավունքի, և՛ ուղղումներ առաջարկելու իրավունքի սուբյեկտները նույնն են՝ կառավարություն և պատգամավորներ, սակայն այդքանով այս երկու ինստիտուտների ընդհանրությունն ավարտվում է: Ընդ որում, եթե օրինագծում ուղղումներ կատարելու առաջարկի ներկայացումը համարենք օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրագործման ձև, ապա ստացվում է, որ այդ իրավունքի իրագործումը դուրս է գալիս օրենսդրական նախաձեռնության փուլի շրջանակներից և կարող է իրագործվել նաև օրենսդրական նախաձեռնության հաջորդ՝ օրինագծի քննարկման փուլում: Նշվածը, ինքնին, տրամաբանորեն հակասում է օրենսդրական նախաձեռնության իրավունքի բովանդակությանը:

Այսպիսով, ամփոփելով օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրագործման ձևերի հիմնախնդրի քննարկումը՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

ա) բավարար չափով հիմնավորված չէ այն դիրքորոշումը, որը թեև օրենսդրական առաջարկությունները դիտում է որպես օրենսդրական նախաձեռնության իրավունքի ի-

<sup>7</sup> St'e Report on Legislative Initiative Adopted by the Venice Commission at its 77th Plenary Session (Venice, 12-13 December 2008).

<sup>8</sup> Постановление от 22 января 1998г. N 2134-II ГД «О Регламенте Государственной Думы Федерального Собрания Российской Федерации» URL: <http://www.consultant.ru/law/review/lawmaking/reglduma/> (հղումը՝ 15.09.2013 թ. դրությամբ):

<sup>9</sup> Լատվիայի սահմանադրություն, հոդված 63: URL: <https://www.constituteproject.org/#/> (հղումը՝ 15.09.2013 թ. դրությամբ):

<sup>10</sup> Լեհաստանի սահմանադրություն, հոդված 119: URL: <https://www.constituteproject.org/#/> (հղումը՝ 15.09.2013 թ. դրությամբ):

րագործման ձև, սակայն դրա քննարկումը պայմանավորվում է օրենսդիր մարմնի հայեցողությամբ: Օրենսդրական նախաձեռնության սուբյեկտիվ իրավունքին միշտ համապատասխանում է դրա իրագործմամբ ծագող իրավահարաբերության մյուս կողմի՝ օրենսդիր մարմնի պարտականությունը՝ քննարկելու իրեն ներկայացված օրինագիծը կամ օրենսդրական առաջարկությունը,

բ) թե՛ պատրաստի օրինագծի առաջադրման և թե՛ ապագա օրենքի հիմնական գաղափարն արտացոլող օրենսդրական առաջարկության ձևով օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրագործման դեպքում նույնն է մնում այս իրավունքի բովանդակությունը՝ որպես օրենսդիր մարմնի առջև օրենսդրական նոր կարգավորման հարց բարձրացնելու Սահմանադրությամբ ապահովված հնարավորություն,

գ) կոնկրետ պետությունում օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրագործման ձևերի սահմանման հարցում պետք է առաջնորդվել՝ ըստ խնդրի գործնական կարևորության: Քանի որ օրենսդրական առաջարկությունը օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրագործման առավել պարզ ընթացակարգ է, ապա այդ հնարավորությունը կարելի է նախատեսել միայն այն սուբյեկտների համար, որոնք կարող են օբյեկտիվ բարդությունների հանդիպել որակյալ օրինագծեր պատրաստելու հարցում,

դ) արդեն իսկ շրջանառության մեջ գտնվող օրինագծերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու իրավունքը չի համարվում օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրագործում: Թեև այս երկու իրավունքների սուբյեկտները շատ հաճախ նույնն են (կառավարություն և պատգամավորներ), սակայն դրանք իրենց բնույթով տարբեր են: Բացի դրանից՝ շրջանառության մեջ գտնվող օրինագծերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու իրավունքն իրագործվում է ոչ թե օրենսդրական նախաձեռնության, այլ օրինագծի քննարկման փուլում, և եթե դա համարում ենք օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրագործում, ապա խեղաթյուրվում է օրենսդրական գործընթացի փուլային բաժանումը:

## MECHANISMS OF IMPLEMENTATION OF THE RIGHT OF LEGISLATIVE INITIATIVE

**Sayad Badalyan**

*Phd student, YSU Chair of Constitutional Law*

Legislative process as an activity carried out in connection with the adoption of laws starts from the realization of the right of legislative initiative. In this aspect the need for definition of such kind forms is of particular importance, which will provide legal ability for the implementation of the right by subjects of legislative initiative. In this context this article is dedicated to the problems of fixing such kind of forms of the realization of the right of legislative initiative.

## ПРОБЛЕМЫ ФОРМ ОСУЩЕСТВЛЕНИЯ ПРАВА ЗАКОНОДАТЕЛЬНОЙ ИНИЦИАТИВЫ

Саяд Бадалян

*Аспирант кафедры Конституционного права ЕГУ*

---

Законодательный процесс, как деятельность, осуществляемая в связи с принятием законов, начинается с осуществления права законодательной инициативы. В этой связи особую важность имеет необходимость определения таких форм осуществления законодательной инициативы, которые обеспечат действительную возможность для беспрепятственного осуществления субъектами законодательной инициативы данного права. Данная статья посвящается проблемам юридического закрепления таких форм осуществления права законодательной инициативы.

**Բանալի բառեր** – օրենսդրական գործընթաց, օրենսդրական նախաձեռնություն, օրենսդրական նախաձեռնության իրավունք, օրինագիծ, օրենսդրական առաջարկություն, օրենսդրական նախաձեռնության իրավունքի սուբյեկտ

**Key words:** Lawmaking process, legislative initiative, right of legislative initiative, bill, proposed bill, persons having the right to propose bills.

**Ключевые слова:** законодательный процесс; законодательная инициатива; право законодательной инициативы; законопроект; законодательное предложение; субъект законодательной инициативы